ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ N 8

ք. Երևան **01.02.2023թ.**

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 1918-Ն որոշմամբ հաստատված կարգի 14.1-րդ կետի պահանջների՝ հիմք ընդունելով ՀՀ վարչապետի 2001թ. օգոստոսի 13-ի թիվ 599 որոշմամբ ստեղծված «Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի» անդամների՝ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի 34/14.3/31213-2022, ՀՀ շրջակա միջավայրի 3/02.7/15426-2022, ՀՀ էկոնոմիկայի 03/20091-2022 նախարարությունների, ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության էներգետիկայի և ճանապարհային ոլորտի քաղաքականության վարչությունների, Քաղաքաշինության 06/11.2/13515-2022 և Կադաստրի ԱԳ/13662-2022 կոմիտեների գրություններով ներկայացրած դրական կարծիքները՝ Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովը տալիս է դրական եզրակացություն՝ **ՀՀ Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի Ջրաբեր բնակավայրի հողերի** նպատակային նշանակությունը փոխելու նպատակով կազմված հողաշինարարական գործին, որով նախատեսվում Բյուրեղավան համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նպատակային նշանակության հողերից **0.02 հա** այլ հողատեսք (կադաստրային ծածկագիր՝ 07-055-0206-0007) փոխադրել էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողեր նպատակային նշանակության՝ կապի հողեր գործառնական նշանակության՝ բջջային կայան կառուցելու նպատակով:

Հանձնաժողովի նախագահ՝ Վ. Տերտերյան

քարտուղար՝ Հ. Մկրտչյան